ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2017 թվականի 1-ին եռամսյակում A-30-17-8 ծածկագրով իրականացված «Ուժային լարման և հոսանքի տրանսֆորմատորների մատակարարում» առաջարկների բաց հարցման մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2017

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ -ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքները

Մոնիթորինգի իրականացման հիմքը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշման №1 հավելվածով հաստատված՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

Մոնիթորինգի օբյեկտը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն):

Մոնիթորինգի առարկան՝ Ընկերության կողմից 2017 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում իրականացված գնումների առանձին գործարքները:

Մոնիթորինգի նպատակը՝ Ընկերության կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և համապատասխանության գնահատում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին:

Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝ 2017 թվականի մայիսի 15-ից մինչև 2017 թվականի օգոստոսի 15-ը:

Մոնիթորինգի մեթոդաբանությունը՝ Ընկերության գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2017 թվականի 1-ին եռամսյակում A-30-17-8 ծածկագրով իրականացված «Ուժային, լարման և հոսանքի տրանսֆորմատորների մատակարարում» առաջարկների բաց հարցում

Ընկերության 2017 թվականի գնումների պլանի հիման վրա, տնօրենի 2017 թվականի հունվարի 26-ի №12-Լ հրամանի համաձայն, Ընկերությունը կազմակերպել և անցկացրել է առաջարկների բաց հարցում 15 լոտով՝ հիմնական էլեկտրատեխնիկական նշանակության սարքավորումների և նյութերի մատակարարման պայմանագրի կնքման իրավունքով, հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանելով 2017 թվականի մարտի 14-ը, հետագայում տեղափոխելով մարտի 17-ը:

Հայտարարությունը Ընկերության կայքում և ֆինանսների նախարարության էլեկտրոնային տեղեկագրում հրապարակվել է 2017 թվականի փետրվարի 28-ին:

Հանձնաժողովի աշխատակազմն ընտրել է «Ուժային, լարման և հոսանքի տրասնֆորմատորների մատակարարում» Լոտը՝ գնումների առանձին գործարքների մոնիթորինգի շրջանակներում ուսումնասիրելու նպատակով:

Մրցույթի հայտարարումից հետո, հայտ են ներկայացրել վեց մասնակից՝ որոնցից Լոտ 9-ի համար գնային առաջարկ էին ներկայացրել երկու մասնակից՝

1. «Տ-Ֆըրնիչըր» ՓԲԸ,
2. «Կալուգագլավսնաբ» ԲԸ:

	Լոտ9-ի համար գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների անվանումները	**Ներկայացված գնային առաջարկները հազ դրամ առանց ԱԱՀ**	**Ներկայացված գնային առաջարկները ԱՄՆ դոլար[1] առանց ԱԱՀ**
1	**2**	**3**	**4**
1	«Տ-Ֆըրնիչըր» ՓԲԸ	1 402 179,0	
2	«Կալուգագլավսնաբ» ԲԸ	1 274 102,9	2 632 716,0

[1]17.03.2017 թ.-ի դրությամբ 483.95 ՀՀ ԿԲ փոխարժեքով:

Հաղթող է ճանաչվել «Կալուգագլավսնաբ» ԲԸ-ն՝ առաջարկված գինը 1 274 102,9 հազար ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

A-30-17-8 ծածկագրով իրականացված «Ուժային լարման և հոսանքի տրանսֆորմատորների մատակարարում» առաջարկների բաց հարցման փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել, որ.

1. Առաջարկների բաց հարցման հայտերը ներկայացնելու համար սահմանված վերջնաժամկետը հետաձգվել է, ինչի մասին տեղեկացվել են առաջարկների բաց հարցման բոլոր մասնակիցները:
2. Ընկերության կողմից հրապարակված մրցութային փաստաթղթերում տվյալ գնման համար նախատեսված պայմանագրի 7.2 կետով ահմանված է, որ մատակարարված ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի համար գնորդը վճարում է մատակարարին՝ գնորդի գլխավոր տնօրենի կողմից մատակարարի ներկայացրած հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-ապրանքագիրը ստորագրելուց հետո 180 օրացույցային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան վճարմանը ենթակա ամսվա 26-ը՝ անկանխիկ հաշվարկով՝ մատակարարի բանկային հաշվին դրամական փոխանցում կատարելու միջոցով:

Հարկ է նշել, որ տվյալ լոտի համար հայտ ներկայացրած երկու մասնակիցներն էլ հայտի «Պայմանագրի նախագծի առումով տարաձայնությունների արձանագրություն» բաժնում, որպես պայմանագրի «ցանկալի» պայման առաջարկել են 180 օրացույցային օրը փոխարինել 30 օրացուցային օրով: Առաջարկված փոփոխությունը հաղթող մասնակցի հետ կնքված պայմանագրում արվել է: Այս համատեքստում բազմիցս նշվել է, որ վճարման երկար ժամկետի սահմանումը մատակարարների մոտ առաջացնում է լրացուցիչ վարկային միջոցներ ներգրավվելու անհրաժեշտություն, ինչը հանգեցնում է ապրանքի թանկացման: Այս հանգամանքը թույլ չի տալիս նաև, որ մրցույթներին մասնակցեն արտադրողներ և դիստրիբյուտորներ:
3. Ընկերությունը մրցութային փաստաթղթերում շուկայի ուսումնասիրության արդյունքներ չի ներկայացրել: Սակայն 2017 թվականի փետրվար ամսին Ընկերության կողմից հանձնաժողով է ներկայացվել որոշ ապրանքատեսակների համար իրականացված շուկայի ուսումնասիրության արդյունքներ: Տվյալ գործարքի մոնիթորինգի շրջանակներում, հաղթող մասնակցի՝ որի հետ արդյունքում կնքվել էր մատակարարման պայմանգիր, ներկայացրած գնային առաջարկները համեմատվել են Ընկերության վերը նշված շուկայի ուսումնասիրության արդյունքում ստացված գնային առաջարկների հետ: Հարկ է նշել, որ հաղթող մասնակցի առաջարկած գները զգալիորեն բարձր են շուկայի ուսումնասիրության արդյունքներում ստացած գներից: Այսինքն՝ մինչև մրցույթ իրականացնելն Ընկերությունը պատկերացում ունեցել է տվյալ ապրանքների կամ ծառայությունների շուկայի այդ պահին առկա իրավիճակի և միտումների մասին սակայն ոչինչ չի ձեռնարկել առաջարկված գները նվազեցնելու նպատակով, օրինակ՝ կարող էր իրականացնել մրցութային փաստաթղթերում հայտարարված վերասակարկության իր իրավունքը:

Այս համատեքստում հարկ է նշել, որ գնումների գործընթացի թերի կազմակերպման արդյունքում շուկայականից բարձր գներով ձեռք բերված ապրանքների արժեքները (շուկայական գները գերազանցող չափով) հաշվի չեն առնվի ընկերության սակագներում:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

Ընկերության անվանումը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ

Գնման անվանումը «Ուժային լարման և հոսանքի տրանսֆորմատորների մատակարարում»

Գնման ծածկագիրը A-30-17-8

Գնման ձևը առաջարկների բաց հարցում

ԲՈԼՈՐ ՓՈՒԼԵՐԸ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
1	Համարժեք և համապատասխան գրառումները պահպանվում են գնումների գործընթացի ողջ ընթացքում և բավարար տեղեկատվություն են տրամադրում, ինչը թույլ է տալիս աուդիտ կամ անկախ ստուգում իրականացնել	☑	☐	☐	

ԳՆՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
2	Գնման հայտը հաստատել է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը	☑	☐	☐	
3	Գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրությունը ճիշտ է կատարվել	☑	☐	☐	

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
4	Մինչև գնումների հրավերների հրապարակելը իրականացվել է համապատասխան շուկայի ուսումնասիրություն (փաստաթղթերը կցված են)	☐	☐	☑	Ընկերությունը 2017 թվականի 1-ին եռամսյակում հանձնաժողով էր ներկայացրել շուկայի ուսումնասիրություն որոշ տվյալներ (ոչ տվյալ գնման համար), սակայն ստացված արդյունքներն չի օգտագործել շահավետ գնում իրականացնելու նպատակով:
5	Ձեռնարկվել են բավարար միջոցառումներ ոչ մրցակցային եղանակով գնումների ծավալը նվազեցնելու ուղղությամբ	☑	☐	☐	
6	Գնման գործընթացի արդյունավետ իրականացման նպատակով՝ ընկերությունն իր վեբ կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկատուում հրապարակելուց բացի դիմե՞լ է արդյոք այլ միջոցների մասնակիցների շրջանակը ընդլայնելու և նրանց միջև մրցակցության խրախուսման համար	☐	☑	☐	
7	Մասնակից մատակարարների հայտերի ընդունման գործընթացում ապահովվել է արդարությունն ու անկողմնակալությունը	☑	☐	☐	

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
8	Ապահովվել են հավասար մրցակցային պայմաններ հնարավոր մասնակիցների համար	☐	☑	☐	Մրցութային փաստաթղթերով սկզբնական սահմանված վճարման 180 օրացույցային օրը կարող էր խոչընդոտ հանդիսանալ պոտենցիալ մատակարարների համար:
9	Գնման առարկայի բնութագիրը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը	☐	☑	☐	
10	Գնումը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է	☑	☐	☐	

	այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է			
11	Մանրամասն ներկայացված են գնման ընթացակարգի փաստաթղթերը	☑	☐	☐
12	Պատշաճ ձևով ներկայացված են ապրանքների տեխնիկական բնութագրերը	☑	☐	☐
13	Ամբողջությամբ և հստակ նկարագրված են ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարմեկնաբանությունը	☑	☐	☐
14	Գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի, կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի	☐	☑	☐

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
15	Հայտերի գնահատման ընթացակարգը ընթացել է արդար և անկողմնակալ	☑	☐	☐	
16	Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին	☑	☐	☐	Փաստաթղթերը հիմնավորում չեն պարունակում, սակայն մրցութային փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ որոշումն ընդունվել է ապրանքի գնի հիման վրա, ընտրվել է նվազագույն գին առաջարկողը:
17	Հայտերի գնահատման ժամանակ ապահովվել է հատուցում արժեքի դիմաց սկզբունքը	☐	☑	☐	Ապրանքը ձեռք է բերվել Ընկերության կողմից իրականացված շուկայի ուսումնասիրության արդյունքում ստացված գներից զգալիորեն բարձր գնով:

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
18	Պայմանագրի գնի հաշվարկը ներառում է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը)	☑	☐	☐	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
19	Սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ	☐	☐	☑	Պայմանագիր կնքելիս սահմանվել է ողջամիտ ժամկետ, սակայն գնման գործընթացի հայտարարության մեջ սահմանված էր վճարման չհիմնավորված երկար ժամկետ:
20	Գնման պայմանագիրը կատարվել է պատշաճ մակարդակով	☐	☐	☑	Պայմանագիրը ստորագրվել է 06.04.2017թ-ին, իսկ պայմանագրի 6-րդ կետի համաձայն մատակարարվող ապրանքի 50%-ը կփոխանցվի գնորդին պայմանագրի սորագրման օրվանից 40 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ մնացած 50%-ը՝ գնորդի կողմից տրամադրված հայտերի հիման վրա՝ մեկ տարվա ընթացքում:
21	Գնման առարկայի արժեքը համապատասխան է շուկայական արժեքին	☐	☑	☐	